Հավելված N 9
ՀՀ առողջապահական և աշխատանքի
տեսչական մարմնի ղեկավարի
2020 թվականի փետրվարի 20-ի N 152 - Ա հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ
ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ

I.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետև՝ Տեսչական մարմին) զորահավաքային բաժինը (այսուհետ՝ Բաժին) Տեսչական մարմնի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներից է:

2. Բաժնի կանոնադրությունը հաստատում է Տեսչական մարմնի ղեկավարը:

3. Բաժինն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով, Տեսչական մարմնի կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ:

II. ԲԱԺՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. Բաժնի գործունեության հիմնական նպատակներն են՝

1) Խաղաղ ժամանակ զորահավաքային նախապատրաստության աշխատանքների կազմակերպումը, համակարգումը և իրականացումն:

5. Բաժնի խնդիրներն են՝

1) զորահավաքային նախապատրաստության համակարգի ղեկավարումը.

2) զորահավաքային նախապատրաստության ծրագրերի, պլանների մշակման աշխատանքների գիտամեթոդական, տեղեկատվական, մեթոդական ապահովումը.

3) զորահավաքային նախապատրաստության պաշտպանական պատվերի (առաջադրանքի) կատարումն ապահովող միջոցառումների նախապատրաստումը.

4) զորահավաքային և քաղաքացիական պաշտպանության պլանների կատարման, ուսումնական վարժանքների անցկացման կազմակերպումն ու իրականացումը.

5) Տեսչական մարմնի զինապարտների հաշվառումը.

6) քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմի քաղաքացիական պաշտպանության գծով պատրաստման կազմակերպումը.

7) քաղաքացիական պաշտպանության ոլորտին վերաբերվող հարցերի համակարգումը և միջոցառումների կազմակերպումը:

III. ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

6. Բաժնի գործառույթներն ուղղված են սույն կանոնադրությամբ սահմանված նպատակի և խնդիրների իրագործմանը:

7. Բաժինն իրականացնում է հետևյալ գործառույթները.

1) նախապատրաստում է Տեսչական մարմնի ղեկավարի՝ զորահավաքային և քաղաքացիական պաշտպանության գծով հրամանների նախագծերը և դրանք ներկայացնում ստորագրման.

2) իրականացնում է Տեսչական մարմնի ղեկավարի՝ զորահավաքային և քաղաքացիական պաշտպանության գծով հրամանների մասին համապատասխան աշխատողներին տեղեկացնելու աշխատանքները.

3) իրականացնում է Տեսչական մարմնի զորահավաքային նախապատրաստության աշխատանքները.

4) իրականացնում է Տեսչական մարմնի զորահավաքային նախապատրաստության ծրագրերի, տեղեկատվական, մեթոդական և կազմակերպչական աշխատանքները.

5) իրականացնում է Տեսչական մարմնում ուսումնական վարժանքների անցկացման աշխատանքները.

6) սահմանված կարգով իրականացնում է Տեսչական մարմնի զինապարտների հաշվառումը և հատուկ զինվորական հաշվառման ենթակա պահեստազորայինների ամրագրման աշխատանքները.

7) իրականացնում է Տեսչական մարմնի քաղաքացիական պաշտպանության պլանների մշակման աշխատանքները.

8) առաջարկություններ է ներկայացնում Տեսչական մարմնի քաղաքացիական պաշտպանության զարգացման և այդ նպատակի համար ներդրումների, նյութատեխնիկական միջոցների և աշխատանքային ռեսուրսների վերաբերյալ.

9) իրականացնում է Տեսչական մարմնի ղեկավար կազմի քաղաքացիական պաշտպանության գծով պատրաստման աշխատանքները.

10) իրականացնում է Տեսչական մարմնի կողմից քաղաքացիական պաշտպանության գծով պարտականությունների կատարման նկատմամբ հսկողության աշխատանքները:

11) առաջարկություններ ներկայացնել զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի ու քաղաքացիական պաշտպանության աշխատանքների կատարելագործման վերաբերյալ.

12) համակարգել զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի ու քաղաքացիական պաշտպանության հետ կապված միջոցառումները:

13) իր իրավասության սահմաններում մասնակցությունը զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի բնագավառում միջոցառումների իրականացմանը:

V. ԲԱԺՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

8. Բաժինը կառավարում է Տեսչական մարմնի ղեկավարը:

9. Բաժինը գործում է Բաժնի պետի անմիջական ղեկավարությամբ:

10. Բաժնի պետն անմիջական հաշվետու է Տեսչական մարմնի ղեկավարին:

11. Բաժնի կողմից ստեղծված փաստաթղթերը ստորագրում է Տեսչական մարմնի ղեկավարը:

VII. ԲԱԺՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

13. Բաժնի կառուցվածքում ներառված չեն ներքին կառուցվածքային միավորներ: